Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1816

110 Заказ Кн. № 139.

1999

ՄԿՐՏԻՉ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ

ԿՏԱԿԸ

ԼԵՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Շարամբ
1891

Լեո
1816

ՄԿՐՏԻՉ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ

ԿՏԱԿԸ

ԼԷՕԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ս. Շարանի:
1891

41816.00

Доз. ценз. 20-го Сентября, Тифлисъ 1891 г.
Типогр. М. Шарадзе, Никол. ул., 21.

ՊԱՏՃԷՆ ԿՏԵԿԻ ՊԱՏՃԷՆԻՑ

Ս. Պետերբուրգի նոտար Նիլ Կաչէնովսկու անշարժ կալուածքներին չվերաբերեալ գործոց մատենի առաջին մասից, վասն 1866 ամի, քաղուածք։ Էջք՝ 29, 30 և 31, համար 48։ Հազար ութ հարիւր ութսուն և վեց թուականի Յուլիս ամսոյ տասներորդ օրը եկաւ ինձ՝ Պեսոր Միխայլովիչ Մոկէյեվիս մօտ, որ եմ Ս. Պետերբուրգի նոտար Նիլ Միխայլովիչ Կաչէնովսկու պաշտոնակատարը, նրա գրասենեակը, որ գտնվում է Մոսկովսկիյ քաղաքամասնում, Նէվսկիյ պրոսպէկտի վրայ, № 51, անձամբ ինձ յայտնի և գործք կատարելու օրինական իրաւահաստութեան տէր պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, որի բնակութեան տեղն է Մոսկովսկիյ քաղաքամասն, Կոլոկոլնայա փողոց, № 9, ուղեկցութեամբ յականէ յանուանէ ինձ ծանօթ՝ Ս. Պետերբուրգի [illegible] տերինէ Հայաստանեայց եկեղեցւոյ քահանայ Գէորգ Լազարեան Խանթարճեանցի, Ս. Պետերբուրգի երկրորդ կարգի վաճառական Յակոբ Աւետեան Խոչէնաթեանցի և Դրան խորհրդական Ալեքսանդր Իսահակեան Գուրգէնբեգեանցի, որոնք բնակում են՝ առա-

ջինն Սպասսկայ քաղաքամաս՝, Նևսկայ փողոց, տուն № 40—42, իսկ վերջին երկուքը՝ Լիտէյնայ քաղաքամասն, Լիտէյնայ պրոսպէկտ, տուն № 43,— յայտ առնելով թէ նա՝ Սանասարեանցը, կտակի վերաբերեալ ժամանակաւոր կանոնների 10-դ կէտի հիման վրայ (յաւելուած առ 1012 յօդ. I մասի ծ-դ. հատորոյ ծողով. Քաղաք. Օրինաց), ոչնչացնում է իւր՝ Ս. Պետերբուրգի նօտար Նիտոսլաւսկու գրասենեկում 22 Փետրուարի հազար ութ հարիւր ութսուն և երեք թուականին արած և անշարժ կալքերի չվերաբերեալ գործոց վասն հազար ութ հարիւր ութսուն և երեք թուականի մատենի առաջին մասում, հարիւր յիսուն վեց, հարիւր յիսուն եօթն և հարիւր յիսուն ութ էջերի վրայ, ընդ համարաւ երկու հարիւր, արձանագրուած կտակը, և դրա փոխարէն անում է սոյն այս նօտարական կտակը՝ հետևեալ բովանդակութեամբ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն։ Ես 'ի ներքոյ ստորագրեալս, պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, առողջ մտքով և հաստատուն յիշողութեամբ, բարուք դատեցի 'ի դէպս իմ մահուան հետևեալ կարգադրութիւնն անել իմ ամեն անձամբ վաստակած արժական և անշարժ կալքերի մասին. 1) Իմ քրոջ զկատարինէ Սարգսեան Տիգրանեան՝ ցի որդուն՝ բժիշկ

Լևոն Յակոբեան Տիգրանեանցին կտակում եմ 'ի սեփականութիւն՝ ա) այդու երկու հողաբաժին, որոնք պատկանում են ինձ երկու կալուածագրի զօրութեամբ, յօրինուած՝ առաջինը—Թիֆլիսի Քրիստոնեական և Քաղաքական Դատարանի Ատենում հազար ութ հարիւր յիսուն և ինն թուականի Մարտ ամսի քսանև չորսին ընդ համարաւ վաթսունմէկ և երկրորդը՝ Թիֆլիսի նօտար Մելիք Կարակոզեանի մօտ Յունվար ամսի տասներեքին, և հաստատուած Աւագ նօտարի ձեռքով չորսին Փետրուարի հազար ութ հարիւր ութսուն և մէկ ամի ընդ համարաւ երեք հարիւր քսան և եօթն. բ) իմ ամբողջ տնային շարժական կալքը՝ բացի մատենադարանից, հայոց տպարանական մայրերից և այս կտակի հինգերորդ յոդուածում յիշատակուած առարկաներից, և գ) յետ իմ մահուան թէ առ ձեռն դրամով և թէ տոկոսաբեր արժէթղթերով և ուրիշ պարտամուրհակներով յերևան գալիք դրամագլխից՝ մի հարիւր հազար բուբլի առ ձերն պատրաստ ա ծաթ։ 2) Իմ մօտ գտանուող Իլիա Եակովլևիչ Լէսորշչիկով սպասաւորիս, եթէ սա մինչև այն ժամանակ ապրի, երեք հարիւր բուբլի և իմ աղախին Ագրաֆէնա Եակովլևնա Մասլովային՝ մի հարիւր բուբլի։ 3) Հայոց «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմէօնեանցին կտակում եմ ցկեանս տարեկան վեց հարիւր բուբլի թոշակ, որի

համար խնդրում եմ կտակակատարներիս դնել ըստ իրենց հայեցողութեան որ և է վարկի հաստատութեան մէջ տասն երկու հազար ռուբլիի դրամագլուխ հինգ տոկոս բերող արժէտոմսերով և այս տոմսերի կտորներն՝ իւրաքանչիւրի պայմանաժամը հասնելուն պէս՝ տալ Պետրոս Սիմէոնեանցին, ցորչափ նա կենդանի է. իսկ նրա վախճանելուց յետոյ միացնել այդ դրամագլուխն իմ անունը կրող վարժարանի որ 'ի Կարին՝ դրամներին. 'ի դէպս տոմսերի մէկ մասի և կամ բոլորի շիջման՝ ստացուելիք գումարով ձեռք բերել նոյն տեսակի նոր տոմսեր՝ վերոյիշեալ Սիմէ նեանցի թոշակի անընդհատ հատուցումը ապահովելու համար։ 4) Տաճկահայաստանի Վան քաղաքում եղած Ս. Սանդխտեան օրիորդաց վարժարանին, որի շինութիւնը ես եմ կառուցել, կտակում եմ տասն հազար ռուբլի՝ ան պայմանով, որ այս դրամագլուխն ընդ միշտ անձեռնմխելի մնայ, իսկ տոկոսիքը գործադրուի յօգուտ նոյն վարժարանի։ 5) Ծագմամբ տաճկաստանցի հայ լինելով և ըստ կարեացս կամենալով ժանդակել կրօնակից համազգիներիս բարօրութեան, որոնք Տաճկաստանում զուրկ են մնացած կրթութեան միջոցներից, ես իմ մահուանս ըստ էին թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում յերևան գալիք բոլոր մնացեալ ստացուածքս՝ լինին դրանք անշարժ

կայք և կամ դրամագլուխներ, առ ձեռն դրամներ, տոկոսաբեր թղթեր, բաժնէտոմսեր, պարտամուրհակներ, բաժեր և պարտքի վաւերագրեր՝ միով բանիւ ինչ բանի մէջ և որտեղ էլ գտնուին,—կտակում եմ 'ի շինութիւն և պահպանութիւն իմ՝ հայերի համար հիմնարկած և անունս կրող վարժարանին, որ գտնվում է Տաճկաց Կայսերութեան Կարին քաղաքում, ուր ազգակիցներս աւելի կարօտ են կրթական հաստատութեանց. իմ անուամբ հայոց համար հիմնուած նոյն վարժարանին կտակում եմ նմանապէս իմ մատենադարանը, ալբոմները, հաւաքածոյքն և տպարանական պարագաները։ 6) Այս կտակն իրագործելու համար կտակակատար կարգում եմ՝ Իոկական Պետական Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եղեանցին, Դրան խորհրդական Գէորգ Գրիգորեան Եւանգուլեանցին և իմ քեռորդուն՝ պաշտօնաթող Դրան խորհրդական բժիշկ Լևոն Յակոբեան Տիգրանեանցին. այս երեք անձանց որ և է մէկի մահուան դէպքում՝ վախճանած կտակակատարի տեղն անցնում է իմ երեք սաներից (Գէորգ Սբուլեան, Յովսէփ Մաղաթեան և Սարգիս Սողիկեան) մէկը, քանի որ նրանք վարժարանիս ծառայութեան մէջ լինին, վիճակով, որ հանելու են նրանք 'ի ներկայութեան տեղական Թեմական Առաջնորդի և վարժարանի պաշտօնատար անձանց,

որի մասին պէտք է կազմուի ներկայ եղողների ստորագրութեամբ հաստատուած և Թեմական Առաջնորդի ստորագրութեամբ վաւերացուած արձանագրութիւն։ Սոն արձանագրութեան վաւերացուած պատճէնները հաղորդվում են տեղական Թեմական Վարչութեան և կտակակատարներին, իսկ իսկականը պահվում է վարժարանի դիւանում։ 7) Իմ կտակակատարների վրայ պարտք եմ դնում՝ ա). վախճանելուս երից վեց ամսուայ ընթացքում յերևան հանել (ցուցակագրել) ինձնից յետոյ մնացած ամեն շարժական և անշարժ կայքերս և դրամագլուխները. բ) ստանձնել այդ կայքերի և դրամագլուխների տնօրինութիւնը. գ) վճարել կտակուած դրամագլուխները, շարժական և անշարժ կայքը սոյն կտակի առաջին, երկրորդ և չորրորդ յօդուածներում յիշատակուած անձերին և հաստատութիւններին. դ) վարժարանիս կտակուած իմ մնացեալ գումարներից, ոչ աւելի քան կէսը յընթացս հինգ ամաց զկնի մահուանս գործ դնել՝ Ռուսաստանում կամ արտասահմանում յանուն յիշեալ վարժարանի անշարժ կալուածքներ գնելու համար, եթէ առ այդ որ և է արգելքներ յառաջ չը գան. իսկ եթէ այդպիսի արգելքներ յառաջ գան, այն ժամանակ թէ իմ անունը կրող վարժարանի համար անշարժ կայքեր գնելու յատկացուած դրամագլուխներն և թէ յօգուտ վարժա-

բանի կտակած ամեն միւս դրամագլուխներս պահել յանուն նորա տոկոսաբեր թղթերով Ռուսիոյ Պետական Բանկում և կամ Եւրոպական Պետութեանց որ և է բանկում. ե) հետզհետէ գնուելիք անշարժ կայքերի անմիջական տնօրինութիւնը յանձնել իմ անուան վարժարանի Հոգաբարձական Խորհրդին, եթէ կանոնագրութիւնն իմ կենդանութեան ժամանակ հրատարակուած լինի. իսկ եթէ կանոնագրութիւնը կենդանութեանս ժամանակ հրատարակուած չլինի, դոյն յանձնարարութիւնը պիտի կատարուի Հոգաբարձական Խորհրդի գործողութիւնները սկսուելուց յետոյ, այն կանոնագրութեան հիման վրայ, որ յօրինուելու է սոյն կտակի տասն և երեքերորդ յօդուածի համաձայն։ 8) Քանի որ կենդանի են գոնէ երկուքը իմ կարգած կտակակատարներից, որոնք են Կ. Յ. Եղեանց, Գ. Գ. Եւանգուլեանց և Լ. Յ. Տիգրանեանց, կտակիս, իմ անուան ուսումնարանին կտակած կայքերիս գերագոյն վերահսկողութիւնն և ստուգութիւնը պիտի նրանց պատկանի. սոյն իսկ կտակակատարներիս հայեցողութեան եմ թողնում որոշել, թէ Հոգաբարձական Խորհուրդն այդ կայքերի տնօրինութեան վերաբերեալ որ խնդիրների մասին պիտի կանխաւ համաձայնութիւն խնդրէ նրանցից։ 9) Եթէ հայոց համար Էրզերումում (Կարին) հիմնած վարժարանիս սոյն կտա-

կի տասնեւերեքերորդ յօդուածի մէջ ցոյց տուած սկզբունքներիս համաձայն յարատեւելուն արգել։ եղող խոչընդոտներ յառաջ գան, իրաւունք եմ տալիս կտակակատարներիս փոխադրել իմ անուան վարժարանը մի ուրիշ հայաբնակ տեղ հին Հայաստանի սահմաններում, որպէս զի նա շարունակէ զարգանալ սոյն կտակում նշանակած սկզբունքներիս համաձայն։ 10) Կտակակատարները պէտք է միաձայն հաւանութեամբ գործեն։ Ի դէպս եթէ որ և է խնդրի առթիւ միաձայնութիւն չկայանայ, ցանկանում եմ որ խնդիրները ձայների առաւելութեամբ վճռուին, սակայն այն պայմանով, որ սոյն կտակի իններորդ յօդուածում նախատեսուած վարժարանի տեղափոխութեան խնդիրը ոչ մի դէպքում լուծում չընտանայ առանց կտակակատար Կարապետ Յարութիւնեան Եղեանցի յիշարութեան՝ քանի որ նա կենդանի է։ 11) Կտակս կատարելուց յետոյ՝ մահուանս օրից ոչ անցած քան հինգ տարուայ ընթացքում՝ կտակակատարները պարտաւոր են հրատարակել հայոց լրագիրներում յընդհանուր գիտութիւն իրենց գործունէութեան տեղեկագիրը, իսկ վաւերագրերը յանձնել իմ անուան վարժարանի դիւանին և նրանց վաւերական պատճէնները՝ հայոց տեղական Թեմի Վարչութեան դիւանին։ 12) Որովհետև իմ կտակակատար Կարապետ Յարութիւնեան

նեան Եղեանցին ուրիշներից աւելի յայտնի են ինձ առաջնորդող շարժառիթներն և փափագները անուանս կրող վարժարանի նկատմամբ, ուստի յատկապէս նրան եմ յանձնում, քանի որ նա կենդանի է, վարժարանի գերագոյն տեսչութիւնն ըստ ամենայն մասանց վարչութեան, տարեկան ել և մտից նախահաշիւների հաստատութիւնը, վարժարանի համար կառավարիչներ, ուսուցիչներ և ուրիշ պաշտօնատարներ կարգելու և արձակելու, որպէս և նրանց գործունէութեան վերահսկելու իրաւունքը։ Պ. Եղեանցի հայեցողութիւնից կախուած կը լինի ցոյց տալ այն խնդիրները, որոնց վճիռը չէ կարելի առանց իւր հաստատութեան իրագործել։ 13) Եթէ մահուանս րոպէին դեռ կազմուած չլինի իմ անուան վարժարանի համար ինձնից հաստատուած մի մշտական կանոնադրութիւն, այն դէպքում յանձնում եմ Կարապետ Յարութիւնեան Եղեանցին յօրինել դոյն կանոնադրութիւնը մահուանս օրից ոչ ուշ քան երեք տարուայ ընթացքում՝ հետեւեալ գլխաւոր պայմաններով. ա) հայոց համար հիմնարկուած իմ անուան վարժարանը դրվում է ամենայն հայոց Գերագոյն Կաթողիկոսի՝ Ս. Էջմիածնի Պատրիարքի հայրական հովանաւորութեան ներքոյ. բ) աշակերտների թիւում, վարժարանի միջոցներին համեմատ, լինելու են նաև՝ առաւե-

լապէս Հայաստանեայց Եկեղեցւոյն պատկանող հօրից-մօրից որբ ձրիավարժ սաներ, յամենայն դէպս ոչ նուազ քան երեսուն հոգի. գ) վարժարանի համար և նրան կից կազմակերպվում է մի Հոգաբարձական Խորհուրդ, որի պաշտօնն է կառավարել վարժարանի կալքերն և վարժարանի տնտեսական մասը. դ) Հոգաբարձական Խորհուրդը նախագահ ունենալով Հայաստանեայց Եկեղեցւոյ Վիճակային Առաջնորդին՝ պէտք է բաղկանայ իմ անուան արժարանի վերատեսչից, նաև տեղական հայադաւան ժողովրդի և ուսուցչական խմբի ընտրած անդամներից։ Վերոյիշեալ երեք սաներս ցկեանս անդամ են Հոգաբարձական Խորհրդի։ Թէ ժողովրդից և թէ ուսուցչական խմբից ընտրուելիք անձանց թուի և նոյն իսկ ընտրութեան եղանակի որոշումը թողնում եմ կանոնադրութիւնը կազմողին (երեսնամեայ հասակը չըլրացրած անձինք չեն կարող Հոգաբարձական Խորհրդի անդամ լինել). ե) վարժարանի կանոնադրութիւնը պէտք է բովանդակէ վերաստուգութեան և հաշուետուութեան կանոն, և պարտաւորութիւն դնէ վարժարանի Հոգաբարձական Խորհրդի վրայ իւրաքանչիւր տարի տեղեկագիր հրատարակելու յընդհանուր գիտութիւն վարժարանի գրութեան և նրա կալքի, վարժարանի մտից և ելից մասին, և կտակատարների հայեցողութեան ներ-

կայացնելու այդ տեղեկագիրը. զ) վարժարանին նուիրած կալքերից և գումարներից տարեկան եկամուտներից պէտք է հանուին տասն տոկոսիք մի առանձին հիմնադրամ կազմելու համար 'ի հայթայթումն պիտոյից առաւելապէս վարժարանի այն՝ 'ի հօրէ և 'ի մօրէ որբ աշակերտաց, որոնց վարժարանի վարչութիւնը օգտակար կը դատէ Եւրոպա ուղարկել կատարելագործելու համար, սակայն այս անհրաժեշտ պայմանով, որ ուղարկուողները պարտաւորութիւն յանձն առնեն՝ վերադարձից յետոյ իրենց գործունէութիւնը նուիրել իմ անուան վարժարանին կամ (գործել) ըստ ցուցման վարժարանի տեսչութեան՝ ուղարկուելու ժամանակ նրանց յայտնուած պայմաններին համաձայն. է) եթէ վարժարանի միջոցները թոյլ տան՝ նրանցից կարելի է օժանդակութիւն տալ ուրիշ հայաբնակ տեղերում վարժարաններ հիմնելու համար, և ը) դասաւանդութիւնը լինելու է հայոց լեզուով։ 14) Իրաւունք եմ տալիս իմ կտակատարին և քեռորդուն՝ Լեւոն Յակոբեան Տիգրանեանցին և նրա արական սերնդի հայադաւան աւագ շառաւղին ըստ իւր հայեցողութեան երեք որդեգիր կարգելու 'ի թիւս իմ վարժարանի ձրիավարժ սաների, պահպանելով այն կանոնները, որոնք սահմանուած են աշակերտների ընդունելութեան համար։ 15) Իմ անուան վար-

ժարանին պատկանող անշարժ կայքերն և տոկոսաբեր թղթե ը կարող են միայն կտակակատարներիս ձեռքով վաճառուիլ և այն՝ քանի որ նրանցից ոչ նուազ քան երկուքը կենդանի են. իսկ իմ կտակակատարներից երկուքի մեռնելուց յետոյ վարժարանին պատկանած անշարժ կայքերն և տոկոսաբեր թղթերը չէ կարելի օտարացնել, գրաւ դնել և ոչ և է պարտքով ծանրաբեռնել։ Այս մասին կտակակատարները պէտք է պարտուպատշաճ կարգադրութիւն անեն և սոյն կամքիս անթերի կատարումն ապահովելու համար օրինական միջոցներ գործ դնեն։

16) Եթէ վարժարանի շէնքը կենդանութեանս ժամանակ կառուցուած չլինի, տան շինութեան համար կարելի է գործ դնել յօգուտ վարժարանի կտակած միջոցներիցս ոչ աւելի քան չիսուն հազար ռուբլի։

17) Եթէ իմ կտակակատար Կարապետ Յարութիւնեան Եզեանցը վարժարանիս համար կանոնադրութիւն պատրաստելուց առաջ վախճանի, այն դէպքում տասներեքերորդ յօդուածի մէջ բացատրուած հիմքերի համեմատ կանոնադրութիւն կազմելու գործը յանձնում եմ միւս կտակակատարներիս՝ սոյն կտակիս տասներորդ յօդուածի ոլորշած կարգով։

18) Եթէ կտակակատարս Կարապետ Յարութիւնեան Եզեանց իմ անուան վարժարանի գտնուած ընտրելով յօժարի վարժարանի կառավարութիւնը յանձնառնել, իրաւունք եմ տալիս նրան ստանձնելու վարժարանի հետ և սրան կից լինելիք ամեն հիմնարկութիւնների վերատեսչի կոչումը ցկեանս՝ սոյն կոչման հետ կապուած ամեն իրաւունքներով ու պարտաւորութիւններով հանդերձ, պահպանելով սոյն կտակի՝ նրան որպէս կտակակատարի յատկացրած իրաւունքներն ու պարտաւորութիւնները և 19) Կը ցանկամ, եթէ միայն հնարաւոր լինի, թաղուիլ վարժարանիս գտնուած տեղում՝ Կարին։ Այս կտակի նախագիծը կարդացուած է կտակարար Սանասարեանցին վերոյիշեալ վկաների ներկայութեամբ և զկնի նրա հաւանութեան և յաւերացման, թէ նոյ յօժար կամքով ցանկանում է անել այս կտակն և հասկանում է սրա իմաստն ու խորհուրդը, մուծուած է գործերի մատեանը, որից վերստին նոյն կարգով կարդացուած է։ Քաղուածքը վաթսուն կոպէկանոց դրոշմաթղթի վրայ գրելով պէտք է տալ կտակարար Սանասարեանցին։ Սոյն գործի երեսուներկրորդ էջի վրայ վաթսուներկրորդ տողում ուղղուած է «նրա վրայ» (его на)։ Պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց։ Սոյն կտակը յօրինելու միջոցին ներկայ էին՝ Ս. Պետերբուրգի Հայոց ս. Եկաթերինէ եկեղեցւոյ քահանայ Գէորգ Լազարեան Խանթարճեանց։ Ս. Պետերբուրգի 2-դ կարգի վա-

ճառական Յակ ը Աւէտեան Խոջէյնաթեան։ Դրան խորհրդական Ալեքսանդր Իսահակեան Գուրգէնբեգեանց։ Նոտարի պաշտօն կատարող Պեօտր Մոկէյեվ։ Այս քաղուածքը բառ առ բառ համեմատ է իսկական գործին, մուծուած է մատեան հազար ութ հարիւր ութսուն և վեց թուականին ընդ համարաւ չորս հազար երկու հարիւր ութսուն և ութ և տրուած է պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցին։ Հազար ութ հարիւր ութսուն և վեց ամի տասն Յուլիսի։ Չորրորդ էջի վրայ ներքուստ չորրորդ տողի մէջ ուղղուած է «Հայ» (армянинъ)։ Սոյն քաղուածքն ունի եօթ համարագրուած, ժապաւինուած և կնքով դրոշմուած կնասթերթ։ Նոտարի պաշտօն կատարող Պեօտր Մոկէյեվ։ (Տ. Կ.)։ Ս. Պետերբուրգ, 1890 թ. Մայիսի 24-ին սոյն յիշատակագրից Ս. Պետերբուրգի նոտար Անդրէյևի գրասենեկում պատճէն տրուեցաւ պ. Եղեանցին ընդ համարաւ 1126։ 1890 ամի Յունիսի 19։ Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ։ Ս. Պետերբուրգի Նահանգական Դատարանը, ըստ եօթերորդ Բաժնի, պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի կտակը 'ի կատար ածելու մասին գործը լսելով կարգաւորեց։ 19 Մայիս 1890 թ. վախճանած ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի 10 Յու-

լիսի 1886 ամի յօրինուած և ներկայացուած նոտարական կտակը՝ որպէս քաղուածք Ս. Պետերբուրգի նոտար Կաչէնովսկու արձանագրութեանց մատենի առաջին մասից որ վասն 1886 ամի, էջ 29—31, համար 48, հաստատել առ 'ի կատարածել, որի մասին մակագրութիւն անել յիշեալ քաղուածքի վրայ, և հրատարակել Սենատի յայտարարութեանց մէջ. այս քաղուածքը տալիս պահանջել՝ հրատարակութեան համար 3 ռուբլի, դիւանական մաքս 3 ռուբ. 60 կոպ., և ժառանգութեանց մաքս 6480 ռուբլի։ Յիշեալ մաքսերն և հրատարակութեանց գինն ընդ ամենը 6486 ռ. 60 կոպ. մտած են Ս. Պետերբուրգի Նահանգական Գանձարանն և գրուած են 'ի մուտս Պետական արդեանց 6835 յօդուածում։ Այս կտակը տրուած է կտակակատարին ըստ կտակի հանգուցեալ պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի՝ Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եղեանցին։ 1890 թ. Յուլիսի 5, № 5820։ Նախագահի օգնականի փոխարէն Գրօսման, ատենադպիր № (Տ. Կ.)։ Ս. Պետերբուրգ, 1890 թ. Յուլիսի 11-ին այս յիշատակագրից Ս. Պետերբուրգի նոտար Անդրէյևի գրասենեկում պատճէններ տրուեցան Կարապետ Եղեանցին ընդ համարաւ 1492, 1493։ Ս. Պետերբուրգ 1890 ամի Յուլիսի 18 սոյն յիշատակագրից

Ս. Պետերբուրգի նոտար Անդրէյևի գրասենեկում տրուած են պատճէն եր Կարապետ Եղեանցին ընդ համարաւ 1523 և 1524։ 1890 թ. Օգոստոսի 11։ Ես ներքոյ ստորագրեալս այսու հաւաստում եմ, որ սոյն կտակի առաջին յօդուածին համաձայն ինձ հասանելիք մի հարիւր հազար ռուբլի առ ձեռն պատրաստ դրամը լրիւ ստացայ, նոյնպէս ստացայ կտակակատար Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եղեանից և՝ բոլոր ինձ կտակուած տնային շարժական կալքը յամենայնի համաձայն ոլրիստաւի պահպանողական ցուցակագրին։ Դրան խորհրդական բժիշկ Լևոն Յակոբեան Տիգրանեանց։ Ես՝ ներքոյ ստորագրեալս հաւաստում եմ, որ այս կտակի վրայ վերևում նշանակուած ստորագրութիւնը արուած է իմ՝ Ալեքսանդր Ալեքսէյևիչ Լեբեդևիս՝ Ս. Պետերբուրգի նոտար Տիմոֆէյ Դմիտրիէվիչ Անդրէյևի պաշտօնը կատարողիս ներկայութեամբ, նրա գրասենեկում, Սպասսկիյ քաղաքամասն, Եկատերինինսկիյ կանալ, № 24, ինձ անձամբ յայտնի Դրան խորհրդական բժիշկ Լևոն Յակոբեան Տիգրանեանցի ձեռքով, որի բնակութեան տեղն է Մոսկովսկիյ քաղաքամասն, Կոլոկոլնայա փողոց, № 9։ 1890 ամի 11 Օգոստոսի, ըստ արձանագրութեան մատենի № 1674։ Նոտարի պ. կ. Ալ. Լեբեդև, (Տ. Կ.)։ Ես՝ ներքոյ ստորագրեալս

հաւաստում եմ սոյն պատճէնի նոյնութիւնն ընդ իսկականին, որ ներկայացուած է ինձ՝ Ս. Պետերբուրգի նոտար Տիմոֆէյ Դմիտրիեվիչ Անդրէյևի պ. կ. Ալեքսանդր Ալեքսէյևիչ Լեբեդևիս, նրա գրասենեկում, Սպասսկիյ քաղաքամասն, Եկատերինինսկիյ կանալ, № 24, Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եղեանցի ձեռքով, որի բնակատեղին է Սպասսկիյ քաղաքամասն, Տորգովոյ պերէուլոկ, № 1։ Այս պատճէնն իսկականի հետ համեմատելիս՝ վերջնի մէջ քերուածքներ, յաւելուածներ, գծուած բառեր և ուրիշ ուրոյնութիւններ չկային, բացի նրանից, որ յիշուած է նրա մէջ։ Այս պատճէնի 1 էջի վրայ ուղղուած է «Տիգրանեանց»։ 1890 ամի Օգոստոսի 13։ Ըստ արձանագրութեան մատենի № 1685։ Նոտարի պ. կ. Ալ. Լեբեդև։ (Տ. Կ.)։ Ս. Պետերբուրգ 1890 ամի Օգոստոսի 20-ին սոյն յիշատակագրից Ս. Պետերբուրգի նոտար Անդրէյևի գրասենեկում տրուած է պատճէն ընդ համարաւ 1734, 1738, 1740 Կ. Եղեանցին։

Ես՝ 'ի ներքոյ ստորագրեալս՝ հաւաստում եմ սոյն պատճէնի ստուգութիւնը բնագրի հետ, որ ներկայացուած է ինձ՝ Տիմոֆէյ Դմիտրիևիչ Անդրէյևիս՝ որ եմ Ս. Պետերբուրգի նոտար, իմ գրասենեկում, Եկատերինինսկիյ կանալ, № 24, 'ի ձեռն Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան

Եղեանցի, որ բնակում է Սպասսկիյ քաղաքամասն, Տորգովոյ պերէուլոկ № 4։ Այս պատճէնը բնագրի հետ բաղդատելիս՝ բացի սրա մէջ յիշուածներից ուրիշ յաւելուածներ, քերուածքներ, գծուած բառեր և որ և է ուրոյնութիւններ չկային։ Այս պատճէնի 1 էջի վրայ խազուած «своихъ» (իւր) վրայից մակագրուած է «моихъ» (իմ), 2-դի վրայ «типографскія» (տպագրական) բառում խազուած է «скія» և մակագրուած է «ическія», ուղղուած է «какимъ», 3-դի վրայ յաւելուած է «геробовомъ» (գրոշմաւոր) և 4-դի վրայ խազուած է «засѣданіи» (նիստի մէջ) և մակագրուած է «завѣщаній» (կտակի մէջ). ուղղուած է՝ «надписано» (մակագրուած է)։ 1891 ամի Ապրիլի 29։ Ըստ մատենի № 1077։

ՆՕՏԸՐ ՏԻՄՈՖԷՅ ԱՆԴՐԷՅԵՎ

Տ. Կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0341286